Արտաշես Քալանթարյան

ԻՄ ՇՐՋԱՊԱՏԸ

Հայրի՛կ,- ասաց տղաս,- հեռախոսային կցասարք են վաճառում, առնենք, էլի:

- Առնենք, ի՞նչ անենք,- ասացի:

- Վեց թիվ հավաքելու փոխարեն մի կոճակ ես սեղմելու,- ասաց տղաս,- և՛ ժամանակի խնայողություն է, և՛ էներգիայի: Իսկ հիմա գիտես, չէ՞, թե ինչ ուշադրություն է դարձվում խնայողության հարցերին:

- Իսկ իմ աշխատավարձի խնայողության հարցերը քեզ չե՞ն հետաքրքրում,- հեգնեցի ես:

- Հայրի՛կ,- թեթև նախատինքով ձայնեց տղաս, և բոլոր հարցերը լուծվեցին:

Մարդ ինչ ուզում է թող լինի, միայն թե սեփական երեխաների աչքին ժլատ չերևա:

- Իսկ քանի՞ հոգու հետ կարող եմ խոսել այդ սարքով,- հարցրեցի ես:

- Քսան,- ասաց տղաս:

- Որքա՞ն:

- Քսան:

- Ա՛յ տղա,- ուղղակի քրքջացի ես,- դու իմ շրջապատին ծանոթ չե՞ս: Դու չգիտե՞ս, որ ես հարյուրավոր, եթե չասեմ հազարավոր հարազատներ, ազգականներ ու ընկերներ ունեմ, էլ չեմ խոսում իմ միլիոնավոր ընթերցողների մասին,- համեստորեն ավելացրի ես:

- Դե նրանց հետ քո գրքերով և հեռուստատեսությամբ հիանալի խոսում ես, էլի,- շոյեց ինձ տղաս:

Շողոքորթությունը ամենանողկալի բանն է, բայց շատ է դուրեկան:

Ես հանձնվեցի: Էլեկտրոնիկա-84-ը մտավ մեր տուն: Տղաս անմիջապես այն կցեց հեռախոսին, թուղթն ու գրիչը ձեռքը վերցրեց ու հարցրեց.

- Ուրեմն՝ սկսում ենք: Առաջինն ո՞ւմ ենք գրում:

- Եղբորս, ո՞ւմ,- առանց մտածելու ասացի ես:

Գրեց:

- Երկրորդը գրիր քրոջս,- ասացի անհոգ, թեև հետն էլ տենդորեն մտածում էի, թե որն է քրոջս հեռախոսի համարը... ու այդպես էլ չհիշեցի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Երրորդը...

- Երրորդը գրիր Խորենին... Չէ՛, ավելի շուտ Վարդգեսին... թեև ինչքան հիշում եմ՝ Վարդգեսի համարը պետք է փոխված լինի...

- Հինգերորդը...

- Հինգերորդը... - մտածեցի ես,- հինգերորդը... Գուցե Գևորգին գրենք, հը՞...

- Գրենք,- ասաց տղաս:

Իհարկե, սխալ է սարքի այդ սուղ հնարավորությունների մեջ Գևորգի անունը գրելը: Որով-հետև ես նրան զանգ եմ տալիս շաբաթը և նույնիսկ ամիսը մեկ: Իսկ ամիսը մեկ կարելի է վեց թիվ էլ հավաքել: Ձեռքերս չեն կոտրվի: Բայց ի՞նչ արած՝ ոչինչ, թող գրի:

Վեցերորդ, յոթերորդ և ութերորդ կետերի տերերին գտնելու համար պահանջվեց երկու ժամ: Պարզվեց, որ այնքան էլ հեշտ չէ գտնել այնպիսի ընկերներ, որոնք հացի կամ ջրի նման պետք են քեզ: Իսկ թե դու ես նրանց պետք, թող նրանք էլեկտրոնիկա-84 գնեն ու մտածեն քո անունը գրելու մասին: Դո՞ւ ինչու պիտի գրես:

Մի խոսքով՝ իններորդ կետի համար ոչ մի թեկնածու չգտա: Տղաս ինչ-որ անուններ էր տալիս, բայց ես գլուխս էր թափահարում: Չեն բռնում: Մեկը կա, բայց հենց զանգ եմ տալիս, ինչ որ բան է ուզում ինձնից... Մեկն էլ կա, լսափողը վերցրեց թե չէ՝ իր պետից է բողոքում արդեն երեսուն տարի... Մեկն էլ կա, որ իսկի չեմ էլ ուզում զանգ տալ...

- Վե՛րջ,- ասացի ես հոգնած:

- Հայրի՞կ,- չգիտես կարեկցանքով, թե հեգնանքով հարցրեց տղաս,- ո՞նց թե վերջ: Բա քո շրջապատը... ընկերները... բա միլիոնավոր...

Ես նրան նայեցի խեղճացած:

- Տեսա՞ր, որ ես էլ մնացի զարմացած,- անկեղծությամբ ասացի ես,- բայց մտածում եմ... ամենամտերիմ... ամեն օրվա համար... Ուրեմն էլ չկան... Դժվար է:

Տղաս ծիծաղեց.

- Ի՞նչն է դժվար, ուզո՞ւմ ես մնացած կետերում մի րոպեում իմ ընկերների անունները գրեմ: Հա՞: Լևոն, Կարեն, Արմեն, Աշոտ, Վաղարշակ, Գագիկ... Ափսոս կետերը վերջանում են, իսկ ես դեռ ինչքա՜ն ընկերներ ունեմ...

Ես նրան նայեցի չգիտեմ կարեկցանքով, թե հեգնորեն.

- Երբ իմ տարիքին հասնես և քո տղան քեզ համար էլեկտրոնիկա-2014 գնի, կհիշես ինձ: Մենք դեռ ոչինչ, փա՛ռք աստծո: Մի կերպ պահեցինք մեր ընկերությունը: Տեսար, չէ՞, մինչև հինգը հասցրեցի: Իսկ երբ դու քո ընկերների անունները գրես՝ այն ժամանակ կտեսնես:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Կապրենք՝ կտեսնենք,- վստահ ծիծաղեց տղաս:

- Կտեսնենք,- անվստահ ասացի ես:

1984թ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org